# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

N Ե- 01/71

« 7» Մարտի 2019թ

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ղեկավարի 2019թվականի մարտի 4-ի թիվ 15-Ա և 2019թվականի մարտի 6-ի թիվ 16-Ա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093 33 88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 4 » Մարտի 2019 թվականի N 15-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Ձորագետ համայնքի վարչաիրավական հարաբերությունները կանոնակարգելու նպատակով ստեղծել համայնքապետարանին առընթեր վարչական հանձնաժողով:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Գրիգորյան | Արմեն |
| անդամներ | Շերմազանյան | Կիմա |
| | Եգանյան | Էլմիրա |
| | Հակոբյան | Անուշ |
| | Քոչարյան | Նարինե |

2. Ուժը կորցրած ճանաչել Ձորագետ համայնքի ղեկավարի 2003թվականի դեկտեմբերի 01-ի «Վարչական հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 28 որոշումը

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. մարտի 4

հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093 33 88 09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6 » Մարտի 2019 թվականի N 16-Ա

## ՍԵԴԱ ՄԱՔՍԻՄԻ ԵՂԻՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219.1 հոդվածի և 154 հոդվածի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով Ձորագետ համայնքի վարչաիրավական հանձնաժողովի .2019 թվականի մարտի 6-ի թիվ N 01 որոշումը և ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Ռ. Մխիթարյանի 24.02.2019թվականի թիվ 59/20-835 գրությունը

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154 հոդվածի համաձայն՝ ինքնակամ շինություն կատարելու համար քաղաքացի Սեդա Մաքսիմի Եղինյանին նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:
2. Տուգանքը անձնական միջոցներից 15-օրյա ժամկետում մուծել համայնքային բյուջեի 900235421188 հաշվի համարին:
3. Տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում այն կիրականացվի օրենքով սահմանված կարգով:
4.Ձորագետ համայնքի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ. Շերմազանյանին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի համաձայն սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել քաղաքացի Սեդա Մաքսիմի Եղինյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. մարտի 6
հ. Ձորագետ